ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.03.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/67

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 04.03.2021թ. թիվ 26/26-1/3198-2021 գրությամբ «Արմեն Լևոնյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ պաշտպանության նախարարության 01.03.2021թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/1003-2021 գրության հիման վրա 04.03.2021թ. թիվ 26/26-1/3198-2021 գրությամբ նախաձեռնել է «Արմեն Լևոնյան» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Արմեն Լևոնյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Արմեն Լևոնյան» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««Արմեն Լևոնյան» ՍՊԸ-ն ծանոթացել է Ձեր կողմից ուղարկված նյութերին, միաժամանակ հայտնում է, որ չի առարկում պաշտպանության նախարարության «ԳՀԱՊՁԲ-20-9/17-8» պայմանագրի միակողմանի լուծմանը՝ լուծումը համարում ենք իրավաչափ»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/67 ընթացակարգի շրջանակներում 12.03.2021թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 01.03.2021թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/1003-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Արմեն Լևոնյան» ՍՊԸ-ի միջև կնքված գնման պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, ամփոփելով լուծարման արդյունքում առաջացող տույժերի և տուգանքների վերաբերյալ տվյալները, 30.12.2020թ. դրությամբ միակողմանի ամբողջությամբ լուծել է՝ «Արմեն Լևոնյան» ՍՊԸ-ի միջև 29.01.2020թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-20-9/17-8 ծածկագրով գնման պայմանագիրը և դրան կից 02.06.2020թ. կնքված N 1 համաձայնագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրերի, համաձայնագրերի լուծման վերաբերյալ գրությունը 26.02.2021թ. ուղարկվել է մասնակցի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և նույն օրը հրապարակվել է www.procurement.am (www.gnumner.am) հասցեով ինտերնետային կայքում:

Կից ներկայացվում է Ընկերության վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/67 ընթացակարգի շրջանակներում 12.03.2021թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/67 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/67 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության և «Արմեն Լևոնյան» ՍՊԸ-ի միջև 29.01.2020թ. կնքվել է «ԳՀԱՊՁԲ-20-9/17-8» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 02.06.2020թ. կնքվել է գնման և վճարման ժամանակացույցերը (հավելվածներ N 1 և N 2) հաստատելու մասին համաձայնագիր N 1-ը (հետայսու նաև՝ Համաձայնագիր):

3. Համաձայնագրին կից N 1 հավելվածով՝ գնման ժամանակացույցով, 300 հատ ինտուբացիոն խողովակ N 7,5, 250 հատ ինտուբացիոն խողովակ N 8 և 400 հատ կատետեր միզային երկճյուղանի CH-16 ապրանքատեսակների մատակարարման ժամկետ է սահմանվել ըստ 2020 թվականի եռամսյակների՝

-երկրորդ եռամսյակ - 150 հատ ինտուբացիոն խողովակ N 7,5 և 150 հատ ինտուբացիոն խողովակ N 8,

- երրորդ եռամսյակ – 200 հատ կատետեր միզային երկճյուղանի CH-16,

- չորրորդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 30.10.2020թ. - 150 հատ ինտուբացիոն խողովակ N 7,5, 100 հատ ինտուբացիոն խողովակ N 8 և 200 հատ կատետեր միզային երկճյուղանի CH-16:

4. Պատվիրատուն «Արմեն Լևոնյան» ՍՊԸ-ին ուղղված 25.02.2021թ. թիվ ՆՏԱ/679 ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և «Արմեն Լևոնյան» ՍՊԸ-ի միջև 29.01.2020թ. կնքված «ԳՀԱՊՁԲ-20-9/17-8» ծածկագրով գնման պայմանագրի և դրա հիման վրա 02.06.2020թ. կնքված N 1 համաձայնագրի համաձայն՝ վերջինս պարտավորվել էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 2020թ. 2-րդ, 3-րդ և 4-րդ

եռամսյակների ընթացքում մատակարարել ներքոհիշյալ ցանկի ապրանքատեսակները նշված քանակներով՝

Ապրանքի անվանումը	չ/մ	քանակ	Մատակարարման ժամանակացույց 2020թ.			Չմատակարարված քանակ
			2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ	
ինտուբացիոն խողովակ N 7,5	հատ	300	150		150	300
ինտուբացիոն խողովակ N 8	հատ	250	150		100	250
կատետեր միզային երկճյուղանի CH-16	հատ	400		200	200	400

Հաշվի առնելով վերը նշված ցանկով նախատեսված քանակների մասով ապրանքների չմատակարարման փաստը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը և 6.2 կետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 30.12.2020թ.-ին միակողմանի ամբողջությամբ լուծում է Պայմանագիրը և Համաձայնագիրը»:

5. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 26.02.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 04.03.2021թ. թիվ 26/26-1/3198-2021 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 01.03.2021թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/1003-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Արմեն Լևոնյան» ՍՊԸ-ի դիրքորոշումը, գործում առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ ***պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության և «Արմեն Լևոնյան» ՍՊԸ-ի միջև 29.01.2020թ. կնքվել է «ԳՀԱՊՁԲ-20-9/17-8» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման

ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 02.06.2020թ. կնքվել է գնման և վճարման ժամանակացույցերը (հավելվածներ N 1 և N 2) հաստատելու մասին համաձայնագիր N 1-ը:

Համաձայնագրին կից N 1 հավելվածով՝ գնման ժամանակացույցով, 300 հատ ինտուբացիոն խողովակ N 7,5, 250 հատ ինտուբացիոն խողովակ N 8 և 400 հատ կատետեր միզային երկճյուղանի CH-16 ապրանքատեսակների մատակարարման ժամկետ է սահմանվել ըստ 2020 թվականի եռամսյակների՝

-երկրորդ եռամսյակ - 150 հատ ինտուբացիոն խողովակ N 7,5 և 150 հատ ինտուբացիոն խողովակ N 8,

- երրորդ եռամսյակ – 200 հատ կատետեր միզային երկճյուղանի CH-16,

- չորրորդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 30.10.2020թ. - 150 հատ ինտուբացիոն խողովակ N 7,5, 100 հատ ինտուբացիոն խողովակ N 8 և 200 հատ կատետեր միզային երկճյուղանի CH-16:

Պատվիրատուն «Արմեն Լևոնյան» ՍՊԸ-ին ուղղված 25.02.2021թ. թիվ ՆՏԱ/679 ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և «Արմեն Լևոնյան» ՍՊԸ-ի միջև 29.01.2020թ. կնքված «ԳՀԱՊՁԲ-20-9/17-8» ծածկագրով գնման պայմանագրի և դրա հիման վրա 02.06.2020թ. կնքված N 1 համաձայնագրի համաձայն՝ վերջինս պարտավորվել էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 2020թ. 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակների ընթացքում մատակարարել ներքոհիշյալ ցանկի ապրանքատեսակները նշված քանակներով՝

Ապրանքի անվանումը	չ/մ	քանակ	Մատակարարման ժամանակացույց 2020թ.			Չմատակարարված քանակ
			2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ	
ինտուբացիոն խողովակ N 7,5	հատ	300	150		150	300
ինտուբացիոն խողովակ N 8	հատ	250	150		100	250
կատետեր միզային երկճյուղանի CH-16	հատ	400		200	200	400

Հաշվի առնելով վերը նշված ցանկով նախատեսված քանակների մասով ապրանքների չմատակարարման փաստը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը

և 6.2 կետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 30.12.2020թ.-ին միակողմանի ամբողջությամբ լուծում է Պայմանագիրը և Համաձայնագիրը»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 26.02.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Ամփոփելով վերը նշված փաստերը՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը սույն գործի շրջանակներում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ չի առարկում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «ԳՀԱՊՁԲ-20-9/17-8» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծման հիմքերը և լուծումը համարում է իրավաչափ:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) ***ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են <u>30 օրից ավելի</u>,***

Այսպիսով՝ «Արմեն Լևոնյան» ՍՊԸ-ն իր և ՀՀ պաշտպանության նախարարության միջև 29.01.2020թ. կնքված «ԳՀԱՊՁԲ-20-9/17-8» պայմանագրով ստանձնել է 300 հատ ինտուբացիոն խողովակ N 7,5, 250 հատ ինտուբացիոն խողովակ N 8 և 400 հատ կատետեր միզային երկճյուղանի CH-16 ապրանքատեսակները ՀՀ պաշտպանության նախարարությանը մատակարարելու պարտականությունը, որոնց մատակարարման ժամկետ է սահմանվել ըստ 2020 թվականի եռամսյակների՝

-երկրորդ եռամսյակ - 150 հատ ինտուբացիոն խողովակ N 7,5 և 150 հատ ինտուբացիոն խողովակ N 8,

- երրորդ եռամսյակ – 200 հատ կատետեր միզային երկճյուղանի CH-16,

- չորրորդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 30.10.2020թ. - 150 հատ ինտուբացիոն խողովակ N 7,5, 100 հատ ինտուբացիոն խողովակ N 8 և 200 հատ կատետեր միզային երկճյուղանի CH-16: Արձանագրում եմ, որ գործում առկա նյութերի համաձայն՝ «Արմեն Լևոնյան» ՍՊԸ-ն չի մատակարարել Պայմանագրով նախատեսված՝ վերը նշված ապրանքները և ապրանքների մատակարարման ժամկետը խախտել է 30 օրից ավելի, որի արդյունքում Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ «Արմեն Լևոնյան» ՍՊԸ-ն թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 04.03.2021թ. թիվ 26/26-1/3198-2021 գրությամբ «Արմեն Լևոնյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Արմեն Լևոնյան» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված

բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**